ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՁԵՌԱՄԲ ՕԾՎԵՑ ՄԱՐՄԱՐԱՇԵՆԻ ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ Ս. ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑԻՆ

Նոյեմբերի 4-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեկնեց Արարատի մարզի Մարմարաշեն գյուղ՝ կատարելու նորակառույց Ս. Գևորգ եկեղեցու օծումը:

Վեհափառին ուղեկցող շքախմբին, որի մեջ էին բարձրաստիճան եկեղեցականներ և Մայր Աթոռի միաբաններ, եկեղեցու մուտքի մոտ դիմավորեցին Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպս. Կճոյանը, թեմի հոգևոր դասը, թեմական խորհրդի անդամները, տեղական իշխանությունների ներկայացուցիչներ, ինչպես նաև հավատացյալների խուռներամ բազմությունը:

Հանդիսավոր թափորը «Հրաշափառ»-ով մուտք գործեց եկեղեցի, ուր, Նավասարդ Սրբազանի ողջույնի և բարիգալստյան խոսքից հետո, Ամենայն Հայոց Հայրապետը, իբրև ընթերականեր ունենալով Տ. Շահան արքեպս. Սվաճյանին և Տ. Նավասարդ եպս. Կճոյանին, Սրբալույս Մյուռոնով օծեց նորակառույց եկեղեցու Սուրբ Սեղանը, իսկ սյուներն ու Մկրտության Ս. Ավազանը օծեցին ընթերակա Սրբազանները:

Օծման արարողությունից հետո Նորին Սրբությունը Հայրապետական սրբատառ Կոնդակով եկեղեցու բարերար, մոսկվաբնակ Սերգեյ Կազարյանին շնորհեց Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու բարձրագույն պարգևը՝ «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշան: Ապա Վեհափառ Հայրապետն իր շնորհավորանքի խոսքը և հայրապետական պատգամը հղեց ներկա հյուրերին և եկեղեցում հավաքված մեծաթիվ հավատացյալներին՝ բարձր գնահատանքի արժանացնելով Տ. Նավասարդ եպս. Կճոյանին, բարերարին և եկեղեցու կառուցմանը նպաստած բոլոր անձանց: «Մենք հավատում ենք, որ հավատքով կառուցված այս եկեղեցու սրբազան խորանից պիտի օրհնություն և լույս սփռվի Մարմարաշեն գյուղի մեր հավատացելոց կյանքից և օջախներից ներս», - նշեց Հայոց Հայրապետն իր խոսքում:

Ի նշան օրհնության, Նորին Սրբությունը նորաօծ եկեղեցուն նվիրեց Ս. Հաղորդության սկիհ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ